ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ ԿԱՐԱՊԵՏԻ

ԲԱՆԱԿԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1992-2010 ԹԹ.

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հարությունյան Հ. Մ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր Բալայան Վ. Ռ.

պատմական գիտությունների թեկնածու Հակոբյան Տ. Վ.

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ՊՆ Դրաստամատ Կանայանի անվան ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2014 թ. հունիսի 24-ին, ժամը 14^{00}-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ Երևան, 0019, Մարշալ Բաղրամյան պողոտա, 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. մայիսի 23-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
պատմական գիտությունների
թեկնածու, դոցենտ Մուրադյան Հ. Ղ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

20-րդ դարավերջին հայությունը կրկին կանգնեց լինել-չլինելու խնդրի առաջ: Դեռ չդրված հայոց նոր պետականության հիմքերը՝ անհրաժեշտ էր ինքնապաշտպանության ներուժ: Ազգային-ազատագրական պայքարի հաղթական ելքը հնարավոր եղավ գրանցել կանոնավոր բանակի շնորհիվ, որի հիմքում կամավորական ջոկատներն էին: Բանակը ստեղծման օրվանից իր խնդիրը կատարեց՝ ապահովելով երկրի անվտանգությունը, իսկ 1994 թ. մայիսի 12-ին հրադադարի հաստատումից հետո այն ինքնակատարելագործվելով ամեն օր մարտական խնդիր է կատարում:

Բանակաշինության գործընթացն ուղղակիորեն նպաստեց անկախության ամրապնդմանը: Պատերազմը սկզբից ուներ տարերային բնույթ: Ժամանակին պարզ դարձավ, որ այդ փոքր, բայց հերոսական խմբերն արդեն չէին կարող լիովին ապահովել հայրենիքի պաշտպանությունը: Դրան հարկավոր էր հաղորդել ավելի կազմակերպված ընթացք: Հայ ժողովուրդը պատերազմի առաջին օրվանից աչքի էր ընկնում իր լավ կազմակերպվածությամբ և համախմբվածությամբ: Հայաստանի Հանրապետության (ՀՀ) տարբեր հատվածներում կազմվում էին կամավորական ջոկատներ և ստորաբաժանումներ, որոնք մեկնում էին Արցախ կամ Հայաստանի այլ հատվածներ: Այդ ջոկատները, հատկապես 1988-1992 թթ., չափազանց մեծ գործ են կատարել ՀՀ և Արցախի սահմանների պաշտպանության գործում:

1991 թ. առաջին իսկ մարտական գործողությունները ցույց տվեցին, որ պատերազմը հետզհետե սաստկանալու է, և հարկավոր է կանոնավոր բանակ ունենալ: Հակառակորդն իրականում լայնածավալ պատերազմ էր սկսել ՀՀ սահմանների ու Արցախի վրա հարձակումներով:

Հայոց բանակը ստեղծվեց նախկին խորհրդային ռազմական մշակույթի և ազգայինի միաձուլման հիման վրա: Բավական ծանր պայմաններում տեղի ունեցող ռազմական գործողություններից հետո, երբ հրադադար հաստատվեց, անհրաժեշտ էր բանակի գործունեության այլ ձև մշակել՝ մի մասն իջեցնելով զորանոց, մի մասը թողնելով մարտական հերթապահության: Հայոց բանակն անգամ հաղթանակից հետո շարունակում է մնալ մարտական իրավիճակում՝ այն զուգահեռելով կազմակերպչականառուցվածքային բարեփոխումների հետ: Իսկ գլխավոր խնդիրը մարտական անցյալի փորձը, առկա մարտահրավերները, ռազմաարդյունաբերության ներկայիս միտումները նկատի առնելով՝ նոր իրավիճակներին պատրաստ լինելն է: Այն ենթադրում է զորատեսակների զարգացման, կադրային խնդիրների եւ բանակի մարտունակության հարցերի համալիր ապահովմամբ երաշխավորել ՀՀ և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) անվտանգություն արտաքին ագրեսիայից:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ՀՀ բանակաշինության գործընթացի համալիր ուսումնասիրությունն ունի ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական արդիական կարևոր նշանակություն: Այն հնարավորություն է ընձեռում գիտականորեն ներկայացնել բանակաշինության անհրաժեշտությունը և գործընթացը, ինչպես նաև այն դերը, որ բանակն ունեցավ հայոց նոր պետականության կայացման և նրա անվտանգության ապահովման գործում:

20-րդ դարավերջը և 21-րդ դարասկիզբը Հայոց պատմության մեջ հերոսական մաքառումների, բայց նաև ծանր զոհողությունների բարդ ու հակասական շրջան էր: Հայաստանի անկախության վերականգնումը նոր իրողություն էր ստեղծել: Անկախացումից հետո պատմագիտության տեսադաշտը հարստացավ կարևորագույն ևս մեկ ոլորտով: Խոսքը հայոց բանակաշինության մասին է, որն այսօր պատմագիտության ամենաքիչ ուսումնասիրված ոլորտներից է: Այդ տեսանկյունից ատենախոսությունը կարող է լրացնել պետականաշինության նորագույն

բաղադրիչների ուսումնասիրության ոլորտից թույլ ուսումնասիրված հայոց բանակի ստեղծման, կայացման գործընթացների համակարգային վերլուծությունը: Հայոց բանակաշինության պատմության ուսումնասիրությունը սոսկ պատմաճանաչողական նպատակներ չունի: Նոր սերնդին հայրենասիրության, ոգով դաստիարակելու խնդիրը կարևոր է կայացման ճանապարհ անցնող հայոց պետականության համար: Այս առումով բանակաշինության պատմության ցանկացած ժամանակաշրջանի ուսումնասիրությունն արդիական է ազգահավաք ու միավորիչ գործառույթների ուսումնասիրության, դրանց կիրառման տեսանկյունից: Ատենախոսության արդիականությունը թելադրված է նաև համաշխարհային արդի գործընթացներով: Աշխատանքի տեսական ընդհանրացումներն ու եզրակացությունները թույլ են տալիս համակողմանի գնահատել այն դերը, որ բանակը կատարել է Հայաստանի սահմանների պաշտպանության, արցախահայության գոյության անվտանգության ապահովման գործում: Մյուս կողմից, ուսումնասիրվող հիմնահարցը մեր պատմության այն էջերից է, որը հաճախ է դառնում ադրբեջանաթուրքական, այսպես կոչված, պատմագիտության նենգափոխման թիրախ: Ժամանակն է, որ հիմնավոր և մեկընդմիշտ հակահարված տրվի «հարևանների» այն նենգափոխումներին, որոնք ուղղակիորեն վերաբերում են մեր բանակաշինության գործընթացին, նյութական ապահովման ու զինման, ինչպես նաև ձեռքբերումների և այլ հարցերի:

Թեմայի ուսումնասիրությունը կազմում է ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության դոկտրինի անքակտելի բաղադրիչներից մեկը: Դոկտրինում հստակ նշված է, որ հայության և Հայաստանի անվտանգության ամենամեծ երաշխավորը հենց զինված ուժերն են[1]: Ազգային անվտանգության ռազմավարության մեջ, որպես արտաքին սպառնալիք, նշված է Ադրբեջանի կողմից Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հանրապետությունների հանդեպ զինված ուժի կիրառման բացահայտ սպառնալիքի խնդիրը: Այս համատեքստում առանձնահատուկ կարևորություն է ստանում բանակաշինության վերջին փուլի աշխատանքին կատարված անդրադարձը:

Ռազմական դոկտրինում՝ որպես ռազմական անվտանգության արտաքին սպառնալիքներ, նշված են ՀՀ դեմ ուղղված դաշինքների ստեղծումը, ամրապնդումն ու ընդլայնումը, մասնավորապես՝ Թուրքիայի և Ադրբեջանի ռազմավարական դաշինքը, վերջինիս կողմից ՀՀ շրջափակելու քայլերը, որոնք դիտարկվում են որպես ուժի կիրառում, ինչպես նաև ՀՀ սահմանակից պետություններում ներքաղաքական միջավայրի ապակայունացումը, ներքին բախումներն ու ռազմական գործողությունները և էթնիկական հակամարտությունները, որոնք կարող են սպառնալ ՀՀ ռազմական անվտանգությանը[2]: Ահա, այս նոր բնույթի գործոններով ձևավորվող աշխարհաքաղաքական իրավիճակում աշխատության մեջ, բացի զինված ուժերի զարգացման ընդհանուր ուղղություններից, քննարկվում է նաև ՀՀ արտաքին կապերը ռազմական ոլորտում, ռազմական համագործակցության և դաշնակցային խնդիրները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Տեսական ու մեթոդաբանական այս հիմնադրույթները պայմանավորում են ատենախոսության մեջ քննության ենթարկվող հետևյալ նպատակը. մեկ ամբողջության մեջ բազմակողմանի ուսումնասիրել բանակաշինության գործընթացը, որն ավելի քան 20 տարի անընդմեջ ընթացող պատերազմում ապահովում է մեր անվտանգությունը և դրա ամենամեծ երաշխավորն է:

Ուսումնասիրության համար առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

---

[1] ՀՀ Ռազմական դոկտրին, Բաժին 1, գլուխ 1, կետ 5.1, http://www.mil.am/files/mil-doctrine-arm.pdf

[2] Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, կետ՝ 1.3, http://www.mil.am/files/NATIONAL%20%20SECURITY%20STRATEGYarm.pdf

1. ներկայացնել բանակաշինության բացակայության պայմաններում վարած մարտական գործողությունները, որոնք իրենց տեսակով բացառիկ են

2. լուսաբանել ԽՍՀՄ գոյության պայմաններում ապագա ազգային բանակի ձևավորման սաղմերը

3. ներկայացնել ու վերլուծել բանակաշինության գործընթացին զուգահեռ ընթացող մարտական գործողությունները, որոնք հիմնականում ընթանում էին ՀՀ սահմանների ողջ երկայնքով

4. ցույց տալ նյութական և ռազմական միջոցների վճռորոշ դերն ուժերի կենտրոնացման, մարտավարական խնդիրների լուծման գործում, պարզել դրանց հայթայթման աղբյուրները և այդ ուղղությամբ քաղաքական ուժերի ու անհատ գործիչների գործադրած ջանքերի արդյունքները

5. արձանագրել, որ բանակաշինությունն իրականացվում էր հայության համար դժվարագույն՝ Սպիտակի ավերիչ երկրաշարժի, երկրի շրջափակման և սաստկացող պատերազմի պայմաններում

6. պարզաբանել պատերազմում հայկական բանակի գործողությունների առանձնահատկությունները, մարտավարական, կազմակերպչականռուցվածքային այն նրբությունները, որոնք բանակի թվաքանակի սակավության պայմաններում ապահովում էին բացառիկ հաղթանակներ

7. ցույց տալ, որ հիմնազուրկ է այն պնդումը, թե հայոց բանակի հաջողությունները նաև պայմանավորված էին արտաքին քաղաքական հետևանքներով

8. լուսաբանել բանակաշինության առանձնահատկությունները հրադադարի հաստատումից հետո

9. քննության առնել բանակի արդիականացման շարունակականությունը և նրա կադրային համալրման և սպառազինության ապահովման հարցերը

10. ցույց տալ հայոց բանակի համագործակցության աշխարհագրության ընդլայֆումը և ձևաչափերը աշխարհի ուժային կենտրոնների ու միջազգային կառույցների հետ

11. բանակաշինության գործընթացում տեղ գտած բացթողումների և թերությունների լայն համայնապատկերի վրա առաջարկել նոր գաղափարներ ու մոտեցումներ, որոնք, մեր կարծիքով, կնպաստեն բանակի առողջացմանը և նրա մարտունակության բարձրացմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Աշխատանքի մեթոդաբանական հիմքում դրված է պատմականության և գիտական օբյեկտիվության սկզբունքը: Առաջնորդվել ենք պատմաքննական, պատմահամադրական և պատմաքաղաքագիտական մեթոդների զուգորդմամբ անաչառ պատմություն շարադրելու սկզբունքով: Եզրահանգումները կատարվել են սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների համալիր վերլուծության հիման վրա՝ դիտարկելով մեկ ամբողջության մեջ ու հաշվի առնելով դեպքերի հաջորդականությունը և փոխպայմանավորվածությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ: Ատենախոսությունն ընդգրկում է 1992–2010 թթ. ժամանակահատվածը, երբ դեռ ԽՍՀՄ գոյության վերջին օրերին, հիմնականում գաղտնի, դրվում էին հայոց բանակի հիմքերը: Այդուհանդերձ, շարադրանքը չի կաղապարվել ժամանակագրական այդ նեղ շրջանակներում: Անդրադարձել ենք նաև ավելի վաղ և ուշ շրջանի իրադարձություններին:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ ՈՒ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ուսումնասիրության օբյեկտը հայոց բանակաշինության ցայսօր սակավ հետազոտված հիմնախնդիրներն են: Հայ և օտարազգի մի շարք փորձագետներ ու ուսումնասիրողներ անդրադարձել են այդ թեմային, որոնք,

սակայն, վերաբերում են միայն առանձին ոլորտներին: Ստվերում են մնացել բանակաշինության տարբեր փուլերի առանձնահատկությունները, օրինաչափությունները, ինչի հետևանքով ձևախեղվել է դրանց տրամաբանությունը: Ատենախոսությունում առաջին անգամ փորձ է արվում ընդհանուր գծերով, տարաբնույթ սկզբնաղբյուրների և գիտական ուսումնասիրությունների հիման վրա համակարգային վերլուծության ենթարկել բանակի ստեղծման և զարգացման գործընթացը, ռազմավարությունը, կադրային քաղաքականությունը, հիմնական միտումները, հայեցակարգային մոտեցումները, ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման ու զինված ուժերի (ԶՈՒ) արդիականացման գործընթացը: Ատենախոսության եզրահանգումները և շրջանառության մեջ դրված նորահայտ փաստաթղթերը կարող են օգտագործել հայոց բանակի պատմությամբ զբաղվողները, ինչպես նաև կիրառվել Հայոց պատմություն, միջազգային հարաբերություններ, բուհական և ռազմաքաղաքական հատուկ ուղղվածության դասընթացների ժամանակ: Այն կարող է նպաստել նաև կամայական և խեղաթյուրված տեսակետների ու գնահատականների վերահմաստավորմանը:

Ատենախոսությունը կարող է հիմք դառնալ բանակաշինության զարգացման, ռազմագիտական մտքի ձևավորման համար: Աշխատության դրույթները կարող են օգտակար լինել պետական համապատասխան գերատեսչությունների ու մարմինների համար՝ վերլուծական բնույթի նյութեր պատրաստելու, ՀՀ ազգային ու ռազմական անվտանգության հայեցակարգային փաստաթղթերի մշակումների հարցում: Սույն թեմայի ուսումնասիրումը գործնական կարևորություն ունի նաև ՀՀ ռազմական անվտանգության արտաքին գործոնների գնահատման ու վերլուծության տեսանկյունից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱԲՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները ներկայացվել են ատենախոսի կողմից հրատարակված մենագրությունում, գիտական հոդվածներում, երիտասարդ պատմաբանների գիտաժողովներում, ինչպես նաև բանակի զարգացմանը և հիմնախնդիրներին նվիրված գիտաժողովների ու կլոր սեղանների քննարկումներում: Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդում: Ատենախոսությունը քննարկվել և դրական եզրակացմամբ հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նորագույն պատմության բաժնի կողմից:

ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ. ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ և ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ: Աշխատանքը գրվել է աղբյուրագիտական հարուստ հենքի վրա: Օգտագործվել են արխիվային վավերագրեր, փաստաթղթերի ու նյութերի ժողովածուներ, բանակի հրամանատարական կազմի մասին աշխատություններ, բանակաշինությանը մոտ կանգնած անհատների հուշագրություններ, պարբերական մամուլում տպագրված նյութեր, մասնագիտական գրականություն և այլն: ՀՀ Պաշտպանության նախարարության (ՊՆ) փաստաթղթերը հանձնված չեն պետական արխիվ, այդ պատճառով մեր կողմից օգտագործվել են հիմնականում գործավարությունների փաստաթղթերը, որոնք միասնական համարակալում և կոդավորում չունեն:

Նյութերի առաջին խմբում են արխիվային սկզբնաղբյուրները՝ փաստաթղթեր, վավերագրեր, որոնցից շատերը շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ: Դրանք են՝ որոշ նյութեր ՀՀ և ԼՂՀ պետական արխիվներից, պատերազմի մասնակիցների՝ հրամկազմի անձնական արխիվները:

Երկրորդ խումբը կազմում են բանակաշինության ակունքների մոտ կանգնած զինվորականների գրավոր հուշերն ու գրքերը: Հատկապես արժեքավոր են՝ տարբեր ժամանակներում ԼՂՀ և ՀՀ պաշտպանության նախարարներ եղած Սերժ Սարգսյանի

և Սեյրան Օհանյանի կողմից հեղինակած գրքերը[3]: Դրանք հայոց բանակի ստեղծման և զարգացման մասին գրված առաջին վավերագրություններն են: Օգտագործվել են նաև սպարապետ Վ. Սարգսյանի ելույթները և հարցազրույցները, որոնք հիմնականում զետեղված են՝ «Ոգու փորձություն» գրքում[4]: Նշված աշխատությունները, սակայն ամբողջական և համակողմանիորեն չեն լուսաբանում բարձրացված հարցերը:

Իր ծավալով և նշանակությամբ հարուստ տեղեկություն է պարունակում «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994» հանրագիտարանը[5]:

Օգտագործվել են նաև Զ. Բալայանի «Դժոխք և դրախտ» գիրքը, գեներալ Սամվել Բաբայանի մասին պատմող «Հաղթանակները ինչպես եղել են. Ազդականչ 44» գիտահանրամատչելի գրքում տեղ գտած նյութերը[6]: Մարտական գործողությունների վավերագրության տեսանկյունից կարևոր են նաև Սենոր Հասրաթյանի մենագրությունները[7]:

Բանակաշինության օրենսդրակազմակերպչական հարցերի տեսանկյունից հարուստ տեղեկություններ կան Տարոն Հակոբյանի գրքում[8]:

Երրորդ խմբում ՀՀ ԶՈՒ-ի գիտական հանդես «Հայկական բանակ»-ի վերլուծական և գիտական նյութերն են: Կարող ենք առանձնացնել պաշտպանության նախարար Ս. Օհանյանի[9], գլխավոր շտաբի (ԳՇ) պետ Յու. Խաչատուրովի, փոխնախարարներ Դ. Տոնոյանի, Ա. Նազարյանի և շատ այլ գեներալների ու հրամանատարների հեղինակած հոդվածները: ԳՇ-ի գործունեության մասին կարևոր է ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ նախկին պետ, հետագայում նաև ՀՀ ՊՆ Մ. Հարությունյանի հեղինակած արժեքավոր հոդվածը[10]:

Արցախյան պատերազմի մարտական գործողությունների փուլին առնչվող հարուստ գրականությունն օգտագործված նյութերի չորրորդ խումբն է[11]: Հետաքրքիր

---

[3] Սարգսյան Ս., Հայկական բանակ-10, Երևան, 2002, Օհանյան Ս., 21-րդ դարի բանակը, Երևան, 2007, Նույնի՝ Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, Երևան, 2012:

[4] Սարգսյան Վ., Ոգու փորձություն, Երևան, 2000:

[5] Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994, հանրագիտարան, Երևան, 2004:

[6] Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Ս. Հաղթանակները ինչպես եղել են, Երևան, 2008:

[7] Հասրաթյան Ս., Ղարաբաղյան պատերազմ, Երևան, 2001, Նույնի՝ ՊԲ ՊՇ-ները Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, Ստեփանակերտ, 2009:

[8] Հակոբյան Տ., ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը 1991-1994 թթ., Երևան, 2011:

[9] Օհանյան Ս., Ռազմական կրթության համակարգի զարգացումը որպես ՀՀ պաշտպանական համակարգի արդյունավետության մեծացման գործոն, Հայկական բանակ, 3/2012, էջ 9-19, Նույնի՝ ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի զարգացումը որպես պաշտպանական բարեփոխումների առաջնային խնդիր, Հայկական բանակ, 3/2011, էջ 9-17; Նույնի՝ Հայաստանի Հանրապետության ԶՈՒ անցած ուղին, ներկան և ապագան, Հայկական բանակ, 1-2/2012, էջ 15-24:

[10] Հարությունյան Մ., ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի դերը ռազմական շինարարության գործում, Հայկական բանակ, 1-2/2002, էջ 26-30:

[11] Աբրահամյան Հ., ճակատագրին ընդառաջ, Երևան, 2001, Աղաջանյան Մ., Մինասյան Ս., Ասատրյան Է., Ադրբեջանը Ղարաբաղի ժողովրդի դեմ. ագրեսիայի քաղաքաիրավական հետևանքները և դրանց ազդեցությունը տարածաշրջանային անվտանգության հեռանկարների վրա, Երևան, 2006, Բալայան Զ., Բժիշկ Մարությանը և նրա Պատերազմի հետքը երկար է մնում, Երևան, 1999, Նույնի՝ Անդունդ, Երևան, Ամարաս, 2004, Նույն հեղինակի՝ Դժոխք և դրախտ, Մոսկվա, 1995, Իշխանյան Ե., Լեռնային Ղարաբաղ (1917-1920), Երևան, 1999, Հարությունյան Մ., Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994, Երևան, 2001, Օհանջանյան Մ., Անկախության քայլերը. ԼՂՀ-ում անցկացված հանրաքվեն և ընտրությունները 1991-1998, Ստեփանակերտ, 1998:

են Արցախյան պատերազմում օգտագործված զորատեսակների մասին առանձին աշխատությունները[12]: Որքան էլ զարմանալի է, դրանցում կան նաև ադրբեջանական հեղինակների գրքեր[13]:

Նյութերի հինգերորդ խումբը կազմում է ռազմական օտարալեզու գրականությունը[14]: Այստեղ նաեւ ընդգրկված են «Հայաստանի Հանրապետություն», «Ազգ», «Առավոտ» թերթերի հոդվածներ, որոնք օգտագործվել են միայն համադրմամբ ու ճշտմամբ:

Աշխատությունում օգտագործվել են նաև ատենախոսի «Տարածաշրջանի ռազմականացումը և Հայոց բանակը»[15] մենագրության նյութերից, որտեղ վերլուծված են հայոց բանակի առջև ծառացած հիմնական խնդիրները և զարգացման ուղիները: Մենագրության շատ հարցեր ընդգրկում են այս ատենախոսության տարբեր գլուխները և ենթահարցերը:

Այսպիսով նշված գրականության և հեղինակի երկարամյա անձնական ուսումնասիրությունների ամբողջական վերլուծության շնորհիվ ատենախոսությունն առաջին անգամ ամփոփում է այդ ամենը՝ վերլուծելով բանակաշինության բոլոր շերտերն ու զարգացման հիմնական հարցերը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 190 էջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ. հիմնավորված է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ներկայացված է ատենախոսության գիտական նորույթը, հիմնավորված են հետազոտության ժամանակագրական սահմանները, տրվել է հինախնդրին վերաբերվող սկզբնաղբյուրների և առկա գրականության տեսությունը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. «ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ», ընդգրկում է հինգ ենթագլուխ:

Առաջին ենթագլխում՝ «**Կանոնավոր բանակ ստեղծելու պատմական անհրաժեշտությունը և նրա կազմավորման գործընթացի մեկնարկը»,** ներկայացված է, թե ինչպես ԽՍՀՄ-ի փլուզման ընթացքում հայության արդարացի պահանջն ադրբեջանցիների կողմից վերածվեց հայկական ջարդերի և մարտական գործողությունների[16], ինչպես հայաթափվեցին հայկական շատ բնակավայրեր[17]: Ներկայացված է տխրահռչակ «Օղակ» գործողությունը[18], փաստեր, որ մարտական

---

[12] Գեղամյան Գ., Սահակյան Ռ., Դրվագներ հայ օդաչուների Արցախում մղած հերոսական պայքարից, Երևան, 2006, Դևրիկյան Տ., Կրակե պատնեշ. ՀՀ ԶՈՒ զորատեսակներ, Հրթիռային զորքեր և հրետանի, Երևան, 2008, Հովհաննիսան Ա., Ավիացիան Արցախյան գոյամարտում, Երևան, 2006:

[13] Араслы Д., Армяно-азербайджанксий конфликт. Военный аспект, Баку, 1995.

[14] Благовестов А. И., То, из чего стреляют в СНГ: Справочник стрелкового оружия. / под общ.ред. А. Е. Тараса. Минск, 2000, Латвухин А. Н., Современная артиллерия, Москва, 1970, Минасян С. “Пятидневная война” августа 2008, Военно-политический анализ. Кавказ-2008, Ереван, 2010, Печуров С. Л. Англо-саксонская модель управления в военной сфере, Москва, 2005, Трошев Г., Моя война. Москва, Вагриус, 2001, Трошев Г. Н., Чеченский излом: Дневники и воспоминания. 2-е изд. Москва, 2009, Беляев В., Ильин В. Российская современная авиация. Москва, 2001, Гуров С. В. "Реактивные системы залпового огня", Тула, 2006.

[15] Հովհաննիսյան Ա. Տարածաշրջանի ռազմականացումը և Հայոց բանակը, Երևան, 2013:

[16] Ղարաբաղյան Ազատագրական պատերազմ, 1988-1994, հանրագիտարան, էջ 75:

[17] Դևրիկյան Տ., Սկիզբը. Սահմանադրական պայքարից մինչև կամավորական շարժում, http://www.hayzinvor.am/10111.html

[18] The Washington post, 2 May 1991, p-3; Los Angeles Times, 10 May 1991; Агабабян А.. Республика Армения № 173 (215), 14.09.1991, 101 день в аду. http://www.press.karabakh.info/101

գործողությունները մինչև բուն Արցախը սկսված էին նաև Հայաստանի սահմանամերձ հատվածներում[19], բանակի ստեղծման հիմնավորումները[20], ռազմականացված որոշ կառույցների ստեղծումը[21]: Կազմավորվեց ինքնապաշտպանական գումարտակների սպայական կազմ, կազմակերպվեց զինվորական մասնագետների ուսուցումը: ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությունը որոշում ընդունեց ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի ստեղծման մասին[22]: Ձևավորվեց ընդհանուր հրամանատարություն, որին ենթարկվեցին ինքնապաշտպանության ուժերի բոլոր կազմավորումները: ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի ստեղծումը հայոց բանակաշինության գործընթացի մի մասն էր[23]:

1992 թ. մարտի 10-ին ՀՀ Գերագույն խորհուրդն ընդունեց **«Պաշտպանության մասին»** և **«Զինվորական կոչումների մասին»** ՀՀ օրենքները, որոնք ՀՀ նախագահի կողմից հաստատվեցին մարտի 23-ին[24]: Ապրիլի 7-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշեց, որ մինչև **«ԼՂՀ քաղաքացիների համընդհանուր զինապարտության մասին»** օրենքի ընդունումը, զորակոչն իրականացվի մայիս-հունիս ամիսներին՝ համաձայն գործող օրենսդրության[25]:

Երկրորդ ենթագլխում՝ «**Ինքնապաշտպանական ուժերի և ջոկատների վերակազմավորումը կանոնավոր բանակի»,** լուսաբանվել է անցումային այն փուլը, երբ ջոկատները, մարտական ակտիվ գործողություններին զուգահեռ, վերածվում էին կանոնավոր բանակի:

Ակտիվ գործողություններ էին ընթանում 1992 թ. առաջին իսկ օրերից: Մարտական գործողություններն անդադար էին, սակայն դրան զուգահեռ ստեղծվում էին կանոնավոր ստորաբաժանումներ: 1992 թ. գարնանը ինքնապաշտպանական ուժերը կարողացան դուրս գալ անելանելի դրությունից, ստեղծել էլ ավելի պաշտպանունակ ու մարտունակ կառույց[26]: Դրա շնորհիվ էր նաև, որ մայիսին իրականացվեցին Շուշիի և Լաչինի ազատագրման գործողությունները[27]: Ձևավորվում էին կենտրոնական կառույցները և բաժինները, որոնք իրենց գործունեությամբ կարողանում էին համակարգել ճակատի մարտերը[28]: 1992 թ. գեներալ Նորատ Տեր-Գրիգորյանցի ներկայացրած բացառիկ նախագիծը համաձայնեցվեց վարչապետ Խ. Հարությունյանի հետ և ներկայացվեց ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հաստատմանը: Նախագիծը ծանրակշիռ ու խորապես մշակված էր: Այն ենթադրում էր բանակի կառուցվածքն ու զարատեսակները, ինչպես նաև փուլային զարգացումը:

Երրորդ ենթագլխում՝ «**Զորատեսակների և բաժինների կազմավորումը»,** ներկայացված են առանձին զորատեսակների կայացումը և մարտական գործողություններն արդեն 1993-1994 թթ.:

---

[19] Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, Երևան, 2012, էջ 39:
[20] Սարգսյան Ս., Հայկական բանակ-10, էջ 13-14; Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, Երևան, 2012, էջ 40-49:
[21] Ոգու փորձություն, Սարգսյան Վ., էջ 189-192:
[22] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, g.1, պ.մ. 1, կ. 1, թ. 45-46:
[23] Հակոբյան Տ., ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը 1991-1994, էջ 51-53:
[24] ՀՀ նախագահի հրաման՝ Հ.Ն-0549-Ի, 10 մարտի 1992թ.:
[25] ԼՂՀ պետարխիվ, Ֆ. 254, g. 1, պ.մ. 2, կ. 1, թ. 36-37:
[26] Հարությունյան Մ., Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994, Երևան, 2001, էջ 86: ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, g. 1, պ. մ. 4, կ. 1, թ. 33-45:
[27] Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, էջ 148:
[28] Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, էջ 85-93; Գեներալ-գնդապետ Գ. Դալիբալթայանի հիշողությունները և անձնական արխիվները:

Ամեն զորատեսակ կազմավորվում ու անմիջապես մարտի էր մեկնում կամ կազմավորվում հենց մարտի դաշտում:

Դրանցից էր նաև հայկական ավիացիան: 1989 թ. կրակի ու ռմբակոծության պայմաններում Արցախից դուրս է բերվել ավելի քան 5000 ծեր, երեխա, կին ու վիրավոր, իսկ 1990 թ. կատարվել է նման 5200 ժամ թռիչք[29]: 1992 թ. հունիսի 23-ին հայկական անձնակազմերի շնորհիվ երեք ուղղաթիռներով կատարվում է հայկական օդուժի մարտական առաջին խնդիրը: Հայկական հետախուզական ստորաբաժանումներն աշխարհում առաջին անգամ փոքր ու դյուրաշարժ խմբերով կոնկրետ ուղղությունում հանկարծակի գործողությունների միջոցով առաջադրանքների կատարման մարտավարություն կիրառեցին[30]: Նախկին խորհրդային 7-րդ բանակի ռադիոէլեկտրոնային միջոցների հիմքի վրա ստեղծվեց ՌԵՊ -ը[31]:

Արցախյան ազատամարտի սկզբում հակառակորդը կիրառում էր վարձկան օդաչուների վարած զինվորական ուղղաթիռներ, իսկ հետո տիրացավ նաև 4-րդ բանակի ռազմական ավիացիային: Այդ իրավիճակը հայկական կողմին պարտադրեց օր առաջ ստեղծել ՀՕՊ հուսալի համակարգ: Հարկ էր համակարգային փոփոխություններ կատարել[32]:

Ադրբեջանական օդուժի կատարած թռիչքները մոտենում է 10.000-ի[33], ինչն աննախադեպ էր այս տարածաշրջանի համար:

Ադրբեջանական կողմը խոստովանել է, որ 10 ինքնաթիռ և ուղղաթիռ է կորցրել: Հեղինակավոր ռուս փորձագետ Ա.Խրամչիխինը նշում է 14-16 ինքնաթիռների և 5-6 ուղղաթիռների խոցման մասին[34]: Սակայն մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանք մոտ են 30-40-ին[35]: Հատկապես 1993 թ. պատերազմաշրջանի հարձակողական մարտերն առանձնանում են ռազմարվեստի բացառիկ օրինակներով[36]:

Չորրորդ ենթագլխում՝ «**Բանակի կառուցվածքը և սպառազինությունը»,** ներկայացված են բանակի սպառազինությունը և կառուցվածքը: Զինուժն ըստ կառուցվածքի ուներ ցամաքային զորատեսակներ և օդուժ: Ներկայացված է համապատասխան զենք և զինամթերքը, որոնք հենց սկզբից փոխանցվել են հայկական կողմին[37]: Այսօր հայոց բանակը մեծացնում է սեփական ռազմարդյունաբերության տեսակարար կշիռը: Կարճ ժամանակում հայկական ընկերություններում մշակված զենքերի նմուշներից են՝ հայկական «Կռունկ» և

---

[29] Գեղամյան Գ., Սահակյան Ռ., Դրվագներ հայ օդաչուների Արցախում մղած հերոսական պայքարից, Երևան, 2006, էջ 7:

[30] Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, էջ 75:

[31] Գեներալ-մայոր Արշակ Կարապետյանի անձնական արխիվից:

[32] Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, էջ 79:

[33] Թվերը ստացել ենք հաշվարկային մեթոդով: Երբեմն ադրբեջանական ավիացիան կատարում էր օրական 10 և ավելի թռիչք: Նման ակտիվությամբ թռիչքներ են կատարվել 1992-1994 թթ.: Դրանից առաջ կատարված թռիչքները եղել են քիչ պակաս: Միջինը ընդունելով օրական 5-6 թռիչք՝ պատերազմի ավելի քան 1800 օրերի դեպքում ստացվում է 9000-10800 թռիչք: Դրանց մոտ կեսը կարելի է համարել մարտական թռիչքներ:

[34] Храмчихин А., На кавказских фронтах – ситуация патовая. Пока....НВО. 2010-01-15.

[35] Ղարաբաղյան ազատագրական պատերազմ, էջ 21; Հասրաթյան Ս., Ղարաբաղյան պատերազմ, էջ 63: ՊԲ արխիվ, ՊԲ ՀՕՊ-ի օպերատիվ հերթապահի գրանցամատյան», թիվ 150, էջ 18:

[36] Հովհաննիսյան Ա., Տարածաշրջանի ռազմականացումը և հայոց բանակը, էջ 210-234:

[37] Հասրաթյան Ս., Ղարաբաղյան պատերազմ, էջ 22-24; Դևրիկյան Տ., Կրակե պատնեշ, ՀՀ ԶՈՒ զորատեսակներ, Հրթիռային զորքեր և հրետանի, Երևան, 2008, էջ 15, Кенжетаев М., Оборонная промышленность Республики Армения, Экспорт вооружений, № 6, октябрь-декабрь 1997.

անօդաչու թռչող այլ սարքերը, համազարկային ականանետերը և որոշ զինատեսակներ[38], հրետանու կրակի կառավարման տարբեր համակարգերը: Օրինակ՝ «2 ԿԱ-Ա-02» համակարգերը կարող են մինչև 20 կմ հեռավորության վրա հայտնաբերել ու գրանցել հակառակորդի նշանակետերը, որոշել տեխնիկայի և սպառազինության տեսակը, ցերեկային և գիշերային պայմաններում ճշգրիտ որոշել հրածգության տվյալները և արդյունավետ սպասարկել հրետանու կրակը: Հայ մասնագետները ստեղծեցին շարժական բազմափող նռնականետային կայանքներ[39]:

Հինգերորդ ենթագլխում՝ **«Բանակաշինության շարունակականությունը, զորատեսակները և բաժինները»,** շարունակվում է բանակի ստորաբաժանումների և զորատեսակների ինստիտուցիոնալ կայացման մասին տեղեկությունների ներկայացումը:

1994-2007 թթ. ժամանակահատվածն աչքի ընկավ բանակի համար կարևոր մի առանձնահատկությամբ. դաշտային բանակն այլ բնույթ էր ստանում՝ դառնալով զորանոցային: Ձևված ուժերի զարգացումն ընթանում էր բնականոն փուլերով. ամեն մի նոր տարում բանակը ստանում էր նոր զենք, տեխնիկական նոր հնարավորութուններ և 2000 ական թվականների սկզբներից այն անցավ ավտոմատ կառավարման համակարգերի[40]: Քննարկվում են նաև օդային հարձակման միջոցների, հակաօդային պաշտպանության և հրետանու, այս զորատեսակներից առաջին երկուսի միավորման անհրաժեշտության և հրետանային որոշ միջոցների կատարելագործման, թարմացման հարցերը[41]:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. «ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ», բաղկացած է հինգ ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ **«Դաշտային հրամանատարների դերը սպայական կադրերի պատրաստման գործում»,** քննության է առնված դաշտային հրամանատարների գործունեությունը: Ազատամարտի հրամանատարներից շատերը թեև արհեստավարժ զինվորականներ չէին եւ չունեին նաև բարձրագույն կրթություն, սակայն 1992 թ., երբ պատերազմը սաստկացավ, արդեն վաղուց արհեստավարժ էին դարձել, և կրթության պակասի խնդիրը շեշտակի չէր զգացվում: Իսկ շատերն էլ քաղաքացիական բարձրագույն կրթությամբ անձինք էին, որոնք արհեստավարժ զինվորականներ դարձան ժամանակի ընթացքում: Այսօր էլ նրանցից շատերը բանակում փայլուն հրամանատարներ են[42]: 1992 թ. կառավարությունը որոշեց նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին անցկացնել պահեստազորի սպաների զորակոչ[43]: Սեպտեմբերին հիմնվեցին սպայական եռամսյա դասընթացներ:

Երկրորդ ենթագլխում՝ **«Խորհրդային զինվորականների ներգրավումը բանակաշինության գործում»,** ներկայացված է խորհրդային բանակից ժամանած սպաների դերը պատերազմի և բանակի կայացման գործում: Տարբեր հաշվարկներով հաստատվում է, որ Հայաստան վերադարձած զինվորականների թիվն անցնում է 4000-ը:

Երրորդ ենթագլխում՝ **«Սպայական կադրերի պատրաստումը բարձրագույն և միջնակարգ մասնագիտական հաստատություններում»,** հանգամանորեն ներկայացված են ռազմական կադրերի պատրաստող կրթօջախների դերն ու

---

[38] Հայկական բանակ, 3/2011, հավելված էջ 60-123:
[39] Նույն տեղում:
[40] Բանակն ամեն մասնագետի կարիք էլ ունի՞, Փետրվար, 2004 http://www.aravot.am/2004/02/21/317011/
[41] Հովհաննիսյան Ա., Տարածաշրջանի ռազմականացումը և Հայոց բանակը, էջ 136-155:
[42] ՀՀ ՊՆ կադրերի ընդհանուր ցուցակներից:
[43] Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 113, ց. 167, գ. 517, թ. 1-2:

նշանակությունը: 1994 թ. մարտի 27-ին ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց 1994 թ. երկրորդ եռամսյակում պահեստազորի սպաների ու զինապարտների վարժական հավաքների կազմակերպման մասին[44]: Սեպտեմբերին սկսվեցին առաջին կուրսանտներին ընդունած Բարձրագույն բազմաբնույթ զինվորական հրամանատարական ուսումնարանի՝ ներկայիս Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի և Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի կազմում ռազմաբժշկական ֆակուլտետների հիմնադրման աշխատանքները: Այժմ հայկական բանակի համար սպաների կրթման հիմնական կառույցը Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտն է, որը մինչև 2010 թ. ավարտել է ավելի քան 4000 սպա[45]: Աշխատանքներ են իրականացվում ռազմական համազորային ակադեմիա ստեղծելու ուղղությամբ: 2014-2015 թթ. գործելու է ռազմական ակադեմիան[46]:

Կառավարության որոշմամբ՝ ավիացիոն ուսումնական կենտրոնը վերակազմավորվեց ավիացիոն թռիչքատեխնիկական ուսումնարանի: ՀՀ պաշտպանության նախարարի 25.05.2001 թ. հրամանով ուսումնարանը վերակազմավորվեց ՊՆ բարձրագույն ուսումնական հաստատության՝ ՀՀ ՊՆ ռազմաավիացիոն ինստիտուտի, ուսուցումը ստացիոնար համակարգում՝ 4 տարի[47]:

Արմենակ Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտը անցած տարիների ընթացքում պատրաստել է շուրջ 500 օդաչու, շտուրման, ինքնաթիռային, ուղղաթիռային և ավիացիոն սպառազինությունների տեխնիկներ ու ճարտարագետներ, հակաօդային պաշտպանության մասնագետներ, համազորային կապավորներ[48]:

ՋՈՒ-երի սպայակազմը համալրվում է ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի շրջանավարտներով: Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանը մինչ այժմ տվել է մոտ 1.000 շրջանավարտ, որոնցից շատերն այսօր ծառայում են զինված ուժերում[49]:

1998 թ. ՀՀ ՊՆ համակարգում ստեղծվեց ենթասպաների դպրոցը:

Զինված ուժերում ներդրվել են պայմանագրային զինվորական ծառայության ու պայմանագրային սերժանտների ինստիտուտներն աստիճանաբար արհեստավարժ բանակ ստեղծելու, ինչպես նաև սահմանամերձ շրջաններից բնակչության արտահոսքը կանխելու նպատակով: Ռիսկային էին կադրերի նշանակման գործընթացները: 2007-2008 թթ. սկսվեց կիրառվել սպաների նշանակման վիճակահանության մեթոդը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը: Ռազմական կրթության ոլորտում բարեփոխումներ իրականացնելու նպատակով 2011 թ.՝ ՀՀ կառավարության «Ռազմական կրթության հայեցակարգը» ներկայացնում է ռազմական կրթության նոր քաղաքականություն[50]:

---

[44] Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 113, ց. 171, գ. 124, թ. 1-2:

[45] ՀՀ ՊՆ կադրերի ընդհանուր տվյալներ:

[46] ՀՀ ՊՆ Օհանյան Ս., ելույթ Վ. Սարգսյան անվան ՌԻ-ում կայացած կոլեգիայի ժամանակ:

[47] Բալայան Դ. Կ., Ալեքսանյան Դ. Մ., ՀՀ ՊՆ մարշալ Արմենակ Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտում ռազմական կրթության զարգացման հարցի շուրջ, Հայկական բանակ, թիվ 3 (73), 2012, էջ 42-46:

[48] ՀՀ ՊՆ կադրերի և ԱՀՏԱ վարչության տրամադրած տվյալների ընդհանուր ամփոփում:

[49] Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի կողմից ներկայացված զեկույցի տվյալներ:

[50] Օհանյան Ս. Մ., Ռազմական կրթության համակարգի զարգացումը՝ որպես ՀՀ պաշտպանական համակարգի արդյունավետության մեծացման գործոն: Հայկական բանակ, 3 (73), 2012, էջ 9-19:

Չորրորդ ենթագլխում՝ **«Կադրերի պատրաստումը և որակավորումը արտերկրում»,** ներկայացված են արտերկրում սպայական կադրերի պատրաստման գործընթացը, ուղղությունները, այդ ոլորտի ձեռքբերումները, թերությունները և բացթողումները: Արտերկրում սպայական կադրեր պատրաստվում են՝ սկսած 1993 թ.: 1993 թ. մինչև օրս ՌԴ-ում սովորել է 889 հայ ուսանող, և ներկայում սովորում է ևս 174-ը[51]: ՌԴ-ի համազորային, մասնագիտական ակադեմիաներում և ԳՇ ակադեմիայում ուսանել է 895 սպա: Կարճաժամկետ տարատեսակ դասընթացների և մասնագիտական կուրսերի մասնակցել է ավելի քան 1000 սպա: 1993 թ. Հունաստանի համազորային ակադեմիայում և բժշկական մասնագիտություններով սովորել է 100 սպա և այժմ սովորում է 19-ը[52]: Գերմանիայում սովորում է 15 ուսանող և սպա, իսկ Իտալիայում՝ 10 ուսանող և սպա: ԱՄՆ-ում՝ դասընթացներ է անցել ընդհանուր մոտ 160 սպա, ավելի քան 80 սպա՝ Չինաստանում, մոտ 100 սպա՝ Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում և այլուր[53]:

Ճիշտ է, արտերկրում՝ հատկապես առաջավոր երկրներում, մասնագետներ պատրաստելն ունի իր դրական կողմերը, սակայն դրանում կան նաև բազում խնդիրներ և բացթողումներ[54]: Դա հիմնականում կապված է հայակենտրոն մտածելակերպի հետ:

Սրանով հանդերձ՝ կան նաև ՀՀ-ում սովորած սպաների մակարդակի և որակի ապահովման որոշակի խնդիրներ՝ ցածր կրթական մակարդակի, գիտակցականության, դաստիարակության, պատասխանատվության և այլի հետ կապված:

Հինգերորդ ենթագլխում՝ **«Սպայական կազմի նշանակման և կոչումների շնորհման համակարգը»,** լուսաբանվել են այդ գործընթացների աստիճանակարգը:

Սպաների պաշտոնների նշանակման և կոչումների շնորհման համար հիմք դարձավ նախկին խորհրդայինը, որն էլ իր հերթին ժամանակին վերցվել էր ցարական ռուսական համակարգից: Սպայական համազգեստը ևս խորհրդայինից էր վերցված՝ որոշակի փոփոխություններով: Խորհրդայինից փոքր-ինչ տարբերվում էին կոչումների շնորհման ժամանակահատվածները: Բազմիցս քննարկվել է սպայական կոչումների անունները և տարբերանշանները, համազգեստն ազգայինով փոխելու հարցը: Եղել են նաև հետաքրքիր առաջարկներ, սակայն այդ հարցը դեռ մնում է քննարկումների փուլում:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. «ԲԱՆԱԿԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ»: Այն բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «**Համագործակցությունը ԱՊՀ, ՀԱՊԿ և ՆԱՏՕ-ի հետ**», ներկայացվում է համագործակցությունը ԱՊՀ, ՀԱՊԿ և ՆԱՏՕ-ի ուղղություններում: Ընդհանուր առմամբ, գործում է ոլորտը կարգավորող շուրջ 160 միջազգային պայմանագիր և 25 ծրագիր կամ երկկողմ համագործակցության պլան[55]:

Դեռ 1992 թ. մայիսին ՀՀ զինված ուժերի ներկայացուցիչները մասնակցեցին ԱՊՀ անդամ պետությունների Միացյալ զինված ուժերի գլխավոր

---

[51] ՀՀ ՊՆ կադրերի վարչության ռազմակրթական բաժնի գործավարության թղթապանակներ:

[52] Նույն տեղում:

[53] ՀՀ ՊՆ կադրերի վարչության ռազմակրթական բաժնի գործավարություն. Արտաքին կապերի թղթապանակներ:

[54] Կադրային այս հարցերի մասին տե՛ս նաև Հովհաննիսյան Ա., Տարածաշրջանի ռազմականացումը և Հայոց բանակը, էջ 182-186:

[55] Ավետիսյան Վ. Պ., Մինասյան Ա. Ա., Չիլինգարյան Դ. Ս., Քոթանջյան Հ. Ս., Պաշտպանական քաղաքականություն հասկացությունը՝ որպես Հայաստանում պաշտպանական բարեփոխումների իրականացման տեսական-մեթոդաբանական գործիք. Հայկական բանակ, 1–2(71–72), 2012, էջ 134-145:

հրամանատարության և պաշտպանության նախարարությունների օպերատիվ խմբի հրամանատարաշտաբային ռազմախաղերին[56]:

ԱՊՀ-ի հետ ռազմական համագործակցությունն առավել գործնական հիմքերի վրա դրվեց 1995 թ.՝ կազմակերպության մասնակից պետությունների ՀՕՊ միավորված համակարգի ստեղծումով:

ՀԱՊԿ-ի ռազմական բաղադրիչի զարգացման համար կարևորագույն նշանակություն ունեցավ 2009 թ. փետրվարի 4-ին ՀԱՊԿ-ի օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի ստեղծումը: Այս ուժերի ստեղծման նախաձեռնողներից մեկը եղել է ՀՀ-ը: Առաջնային նշանակություն ունեն հարաբերությունները ՀՀ ռազմավարական դաշնակցի՝ Ռուսաստանի հետ: «Հայաստանի տարածքում ռուսական ռազմակայանի մասին» 1995 թ. և «Բարեկամության, համագործակցության և փոխօգնության մասին» 1997 թ. կնքված պայմանագրերն այդ հարաբերություններին հաղորդեցին ռազմավարական գործընկերության բնույթ:

Հարաբերությունների ամուր զարգացման վկայություններից մեկը 2000 թ. ստորագրված համաձայնագիրն էր, որը վերաբերում է ՀՀ և ՌԴ զինված ուժերի զորքերի միացյալ խմբավորման ստեղծմանը: 1992 թ. ՀՀ դարձավ նորաստեղծ Հյուսիսատլանտյան համագործակցության խորհրդի անդամ, իսկ 1994 թ. միացավ «Գործընկերություն հանուն խաղաղության» նախագծին:

2001 թ. հունվարի վերջին Սերժ Սարգսյանը հայտարարեց, որ ՀՀ զինված ուժերում խաղաղապահ ստորաբաժանման ստեղծմանն ուղղված աշխատանքները թևակոխել են ակտիվ փուլ[57]:

ՆԱՏՕ-ի խաղաղարար առաքելության շրջանակում 2004 թ. ՀՀ մի դասակ ուղարկեց Կոսովո, որտեղ հայ զինվորներն ու սպաները ընդգրկվեցին հունական զորամիավորման կազմում: 2008 թ. այդ զորամիավորումը համալրվեց վաշտով:

Մինչև այժմ մոտ 1000 խաղաղապահ պատվով ծառայել է տարբեր առաքելությունների շրջանակներում: Խաղաղապահները ցանկացած խնդրի կատարման և զորավարժությունների ժամանակ մշտապես արժանանում են բարձր գնահատականների[58]: 2006 թ. ի վեր՝ ԱՄՆ-ն հայկական խաղաղապահ գումարտակին է տրամադրել ավելի քան 6 մլն. դոլար[59]: ԱՄՆ-ի կողմից լրացուցիչ ֆինանսավորում է հատկացվել՝ հայկական խաղաղապահ գումարտակը բրիգադի ծավալի հասցնելու համար:

2003 թ. կարևորագույն իրադարձություններից դարձան հունիսի 16-27-ին Հայաստանում տեղի ունեցած “Cooperative Best Effore–2003” զորավարժությունները:

2006 թ. Հյուսիսատլանտյան դաշինքի օժանդակությամբ Երևանում բացվեց ՆԱՏՕ-ի տեղեկատվական կենտրոնը:

2007 թ. ընթացքում Հայաստանում ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների զգալի ընդլայնման մասին վկայող մի շարք միջոցառումներ անցկացվեցին:

Երկրորդ՝ «**Համագործակցությունը Չինաստանի և հարևան պետությունների հետ**», ենթագլխում ներկայացված են համագործակցության հարցերն այլ երկրների հետ, որոնք մեզ համար ռազմավարական դաշնակիցներ չեն, ակտիվ արտաքին քաղաքականություն չեն վարում, սակայն ռազմական տեսանկյունից մեծ

---

[56] ՀՀ ՊՆ Հարությունյան Մ. հուշերից:

[57] Հայաստան-ՆԱՏՕ, Առաջընթացի 10 տարիներ (1999-2008), կազմեց Թադևոսյան Ա., Երևան, 2008, էջ 5:

[58] Галущак И., Высокая оценка миритворцев. Красная звезда. 7 августа, 2013, стр. 5.

[59] ՀՀ ՊՆ խաղապահ բրիգադի զարգացմանը նվիրված լսումների զեկույցներ:

հետաքրքրություն են ներկայացնում: Դրանք են՝ Չինաստանը, հարևան պետություն ԻԻՀ, Հունաստանը և այլն:

Եզրակացության մեջ ատենախոսության հիմնական նյութը ամփոփված է հետևյալ կերպ.

1. Ազգային - ազատագրական պայքարի հաղթական ելքը հնարավոր եղավ գրանցել կանոնավոր բանակի շնորհիվ, որի կազմավորման հիմքում կամավորական ջոկատներն էին: Մոտ 80 ջոկատներում ընդգրկված ազատամարտիկների թիվը հասնում էր մինչև 4000-ի: Յուրաքանչյուր ջոկատում հատուկենտ էր լինում ավելի քան 50 հոգի, միջինը՝ 20-30, իսկ ավելի մեծ ջոկատները, ընդհանրապես, մատների վրա էին հաշվվում: 100 հոգուց ավելի մարտիկ ունեցել են «Արաբո», «Տիգրան Մեծ» և մի քանի այլ ջոկատներ՝ ոչ ավելի, քան 10-ը: Հայոց պատմության մեջ կա հետաքրքիր օրինաչափություն. ամենաբարենպաստ պայմաններում անգամ կամավորական շարժումները չեն կարող ապահովել ժողովրդի անվտանգությունը, և կիրառական առումով պետք չէ գերագնահատել այս գործընթացը: Այն ռազմահայրենասիրական դաստիարակության տեսանկյունից մեծ նշանակություն ունի, և պետք է այն հաճախ դառնա ակտիվ քննարկումների թեմա, սակայն ազգային անվտանգության ապահովման ինստիտուցիոնալ առումով ազատամարտիկների նշանակությունը չպետք է գերագնահատել: 3000-4000 հոգին չեն կարող ապահովել 3 մլն-ոց ազգի անվտանգությունը, իսկ մեզանում այդպես էր, թե՛ 1900-ականներին, թե՛ առաջին աշխարհամարտի ժամանակ: Եթե ազգը ճիշտ ժամանակին փոքրաթիվ ընտրյալների պայքարը չի դարձնում համազգային և չի ստեղծում կանոնավոր զինված ուժեր, ապա կամավորական այդ շարժումը ի վերջո դատապարտված է պարտության: Տվյալ դեպքում, եթե պայքարին չմիանար Արցախի բնակչությունը, և չստեղծվեր կանոնավոր բանակ, ապա այս պատերազմում մենք տանուլ կտայինք:
2. Բանակաշինության ակտիվ գործընթացը նպաստեց անկախությունն ամրապնդելուն: Բանն այն է, որ հայոց նորօրյա բանակաշինությունը սկսվել էր Հայաստանի երրորդ Հանրապետության հռչակումից առաջ:
3. 1991 թ. առաջին իսկ մարտական գործողությունները ցույց տվեցին, որ պատերազմը սաստկանալու միտում ունի, և անհրաժեշտ էր ունենալ կանոնավոր բանակ, որը կանխեր մեր հայրենիքի նորանոր տարածքների կորուստը: Իսկ հակառակորդն իրականում լայնածավալ պատերազմ էր սկսել ՀՀ սահմանների վրա հարձակումով, և ո՛չ Արցախում, ինչպես ընդունված է ասել:
4. Մինչ ռազմական գործողությունների սկիզբը բանակաստեղծման կառուցվածքակազմակերպչական հսկայական աշխատանք էր կատարվել: Հայ ժողովուրդն այս անգամ պատրաստ գտնվեց: Հայոց բանակի կազմավորման գործընթացի ամենակարևոր առանձնահատկությունն այն էր, որ կամավորական-աշխարհազորային ջոկատների վերակազմավորումը կանոնավոր զինվորական ստորաբաժանումների տեղի էր ունենում պարտադրված պատերազմի ծանր պայմաններում՝ մարտական գործողություններին զուգընթաց:
5. Հայոց կամավորական բանակն արագ ինտեգրվեց իրավիճակին և համալրվելով նոր ուժերով մեկը մյուսի հետևից ազատագրեց Շուշին, Քարվաճառը, Մարտակերտն ու Ակնը: 1993 թ. ամառը բացառիկ էր, երբ

ուժերով և միջոցներով հակառակորդին զիջելով՝ հայոց բանակը աննախադեպ արագությամբ հարձակումներ էր իրականացնում:

6. Հայոց բանակը հրադադարից հետո հայտնվեց բոլորովին այլ իրավիճակում, երբ բանակը մարտական դաշտերից եկավ զորանոց՝ մի մասը թողնելով մարտական հերթապահության: Հայոց բանակն այն եզակի բանակներից է աշխարհում, որը.

- հաղթելով պատերազմում՝ մշտապես մնում է մարտական իրավիճակում և շարունակում է քանակապես ավելի մեծ հակառակորդին թելադրել իր կամքը,
- իր կողմից ազատագրված տարածքներում մարտական պահպանություն իրականացնում է առանց երրորդ ուժի կամ խաղաղարարների, ինչը բացառիկ է, այսպես կոչված, «սառեցված հակամարտությունների» համար,
- մարտական խնդրին զուգահեռ կազմակերպչականռուցվածքային բարեփոխումներ է անցնում:

7. Այսօր հայոց բանակը փոքր բանակների մեջ ամենամարտունակներից և փորձառությամբ առաջատարներից է, որի սպայական կազմն էլ ամենագրագետներից է աշխարհում: Սա փաստում են նաև միջազգային փորձագետները:

8. Հայոց բանակի զարգացման հիմնական փուլերը հետևյալն են.

- 1992-1994 թթ.՝ կազմավորումից մինչև մարտական գործողությունների ավարտը,
- 1994-1998 թթ.՝ հրադադարի հաստատումից մինչև բանակի զորանոցային իրավիճակի բերումը, նոր զորամասերի կազմակերպչական հիմնական գործողությունների ավարտը,
- 1998-2007 թթ.՝ բանակի ինստիտուցիոնալ կայացումը,
- 2007 թ. մինչև այժմ՝ բանակի հիմնական բարեփոխումների և կերպարանափոխման փուլը:

Բանակը ստեղծվեց որպես ազգային պայքարի ոգու արտահայտություն, հետո կայացավ ինստիտուցիոնալ կերպով՝ հստակ օրենքներով ու կանոններով: 2007-2008 թթ. հայոց բանակը գնում է դեպի 21-րդ դարի չափանիշներ: Այս փուլը առանձնահատուկ է լինելու նաև նրանով, որ զարգացվելու է սեփական ռազմաարդյունաբերական համալիր և սեփական ռազմակրթական համակարգ:

9. Հայոց բանակը մտել է իր կազմավորման երրորդ տասնամյակը և հետևյալ խնդիրներն ունի.

ա. ապահովել ՀՀ և ԼՂՀ-ի անվտանգությունը արտաքին ագրեսիայից

բ. պահպանել զորքերի մարտական պատրաստականության վիճակն ու կատարելագործել մարտական հերթապահությունը

գ. որակյալ եւ ժամանակին իրականացնել ՀՀ զինված ուժերի զարգացման պլանով նախատեսված միջոցառումները:

Սրանք, ըստ էության, այս պահին անվտանգության ապահովման խնդիրներն են, որոնք ընդհատվել չեն կարող, միաժամանակ լուրջ զարգացման ու առաջընթացի համար բանակը պետք է իրականացնի.

- Ռազմական կրթության չափանիշների ներդրում: Այժմ գործում է ռազմական ակադեմիա, որն ապահովում է մագիստրոսական ռազմական կրթություն, և կա բակալավրի աստիճան ապահովող ռազմակրթական երեք հաստատություն:
- Ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման պետական ծրագրի իրականացում, որը թույլ կտա խթանել երկրում արդյունաբերական

զարգացումը: Այսօր արդեն մի քանի ձեռնարկություններ սերտորեն ինտեգրվում են արտադրության լայն ոլորտին:

- Ձինվորական կարգապահության ամրապնդումը, որի ուղղությամբ իրականացվող աշխատանքները մեծ արդյունք են տվել, մասնավորապես՝ «Պայքար փողոցային բարքերի դեմ» կարգախոսով մեծ աշխատանք է կատարվում: Միջանձնային հարաբերությունների հետեւանքով եղած զոհերի քանակը միայն վերջին երեք տարիներին նվազել է երկու անգամ: Նույն ժամանակ բանակում անողոք պայքար է մղվում անօրինականությունների, կաշառքի ու վատնումների դեմ: Այս ուղղությամբ ևս առաջընթացը շոշափելի է. միայն խորհրդային զորակոչային համակարգից ձերբազատվելը հսկայական ձեռքբերում է:

Եթե բանակն ունի սեփական հզոր կրթական համակարգ և ռազմաարդյունաբերական համալիր, ապա այդ բանակը, հետևապես նաեւ պետությունը, ինքնաբավ են և ունեն մեծ ապագա: Այսօր ՀՀ ԶՈՒ-ն քայլում է այս ճանապարհով, ինչը երկարաժամկետ հեռանկարի ծանրակշիռ ձեռքբերում է:

10. Մեր օրերում ռազմատեխնիկական և քաղաքական համաշխարհային զարգացումները նորանոր մարտահրավերների առաջ են կանգնեցրել ՀՀ ԶՈՒ-ն, ընդ որում, ակնհայտ է, որ դրանք մեղմանալու միտումներ չունեն: Մեզանից պահանջվում են համարժեք պատասխաններ, որոնք, բովանդակային փոփոխություն կատարելով, պետք է կիրառել մեր պայմաններում:

Ռազմական ոլորտի զարգացման, մատակարարման և այլ հարցերի հիմնական մասն այժմ հիմնականում լուծվում է ՌԴ-ի հետ: Ռազմական համագործակցությունն այլ երկրների հետ հիմնականում կրում է ավելի սահմանափակ բնույթ, ինչն այնքան էլ գոհացուցիչ չէ: Մասնավորապես, անհրաժեշտ է վերանայել տեխնիկական մատակարարման հարցերը:

Միակողմանի ռազմական համագործակցությունն ունի իր և՛ դրական, և՛ բացասական կողմերը: Մեզ համար այս ոլորտում բացի ավանդական լիդերներից, հետաքրքիր է համագործակցությունը Ֆրանսիայի, Հնդկաստանի, Չինաստանի, Ճապոնիայի, Հարավային Կորեայի, Շվեդիայի հետ: Աշխարհում ընդունված ՆԱՏՕ-ՌԴ ռազմական հակադարձ համակարգն ուսումնասիրելու համար հայկական բանակը վաղուց արդեն գործնական քայլեր է ձեռնարկել: Հայ սպաներ են պատրաստվում Հունաստանում, որի բանակն առաջնորդվում է ՆԱՏՕ-ի չափանիշներով: Ֆրանսիան, ԱՄՆ-ից և ՌԴ-ից հետո միակ պետությունն է, որը ստեղծում է ցամաքային, ծովային և տիեզերական ռազմական ցանկացած տեխնիկա, սպառազինություն ու սարքավորում, հետևաբար Ֆրանսիայի հետ համագործակցությունը շահավետ է: Հետաքրքրություն կարող են ներկայացնել նաև ֆրանսիական «Օտարերկրյա լեգիոնի» կազմակերպման և մարտական կիրառման հետ կապված հարցերը, քանի որ մարտական գործողությունների դեպքում ՀՀ ԶՈՒ-ի կազմում անպատճառ մարտնչելու ցանկություն կհայտնեն զգալի թվով սփյուռքահայեր: Հնդկաստանն օր օրի մոտենում է գերտերությունների վերին սանդղակին: Ստեղծվում են հնդկական նմուշի ինքնաձիգներ, հրասայլեր, տարատեսակ հրթիռներ, նավեր և անգամ՝ կործանիչներ: Հնդկաստանն՝ իր ավիակիր նավերի քանակով, մի քանի տարի անց կարող է դառնալ երկրորդն աշխարհում: Հարկավոր է այդ հնարավորությունները և Հնդկաստանի՝ օրեցօր աճող քաղաքական կշիռն օգտագործել ի նպաստ մեր անվտանգության ապահովման բարելավման: Ընդ որում, Հնդկաստանը այժմ արտադրում է մեզ այդքան հետաքրքրող «Սու-30», իսկ ապագայում նաև ֆրանսիական «Ռաֆալ» կործանիչներ: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև հնդկական հրթիռաշինությունը:

Հնդկական բանակը լեռնային պայմաններում մարտական գործողությունների վարման հիանալի փորձ ունի: Արդեն մի քանի տասնամյակ է՝ Հիմալայներում չեն ավարտվում մարտական գործողությունները: Մասնավորապես 1999 թ., այսպես կոչված, Կարգիլյան հիմնախնդրի ժամանակ հնդկական բանակը լավ փորձ ձեռք բերեց օդուժի, հրետանու և հատկապես հատուկ ստորաբաժանումների կիրառության գործում: Մեզ համար այդ փորձը հատկապես կարևոր է Տավուշում և Նախիջևանի օպերատիվ ուղղության վրա հավանական լայնածավալ մարտական գործողությունների առումով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախիջևանում այսօր Ադրբեջանը ստեղծել է համազորային բանակ, դա առանձնակի կարևոր է: Ռազմական համագործակցության համար երկրներ և ուղղություններ շատ կան, որոնք մեծ հեռանկարներ են խոստանում: Արդեն կա երկրների մի մեծ ցանկ: Բացի ավանդական հզոր համարվող ԱՄՆ-ից, Չինաստանից, Իսրայելից և եվրոպական մեծ պետություններից, այդ ցանկում են օրեցօր իրենց փառավոր անցյալը վերարժևորող Ճապոնիան, Հարավային Կորեան, Շվեդիան, ՀԱՀ-ը: Ռազմականացումը և համաշխարհային ուժերի ծանրության կենտրոնը նորից վերադառնում է Եվրասիա: Այս համատեքստում մեզ համար ևս կարևոր է այստեղ ստեղծել վստահելի կապեր:

11. Հայոց բանակի զարգացման համար զորատեսակների առումով կան մի քանի խնդիրներ, որոնք ծախսատար են՝ միջնաժամկետ և երկարաժամկետ լուծվելու հնարավորություններով, որոնք մեծապես կբարձրացնեն բանակի մարտունակությունը և հնարավորությունները:

Խոսքը ընդհանուր ՕՀՄ-ների մասին է և որպես դրանց առանձին ու հիմնական ուղղություն՝ օդուժի: Մեզ համար հատկապես առարկայական նշանակություն ունեն հրթիռային հեռահար միջոցները՝ ՀԿՌՀ-ները, մարտավարական և օպերատիվ մարտավարական հրթիռային համալիրները: Նշված ոլորտում ավելի առարկայական է օդուժ և ՀՕՊ զորքերի զարգացումը, ինչը, նախ և առաջ, պետք է ընթանա միասին: Դրանք՝ իրենց բովանդակությամբ, տարողությամբ, կատարման ծավալով, մի քանի տարվա ընթացքում կամ մշտապես կատարվելիք աշխատանքներ են, քանի որ բանակի տարին կամ օրը երբեք չի վերջանում: Բանակը կատարելագործվում է ամեն օր, և ամեն օր առաջարկներ ու գաղափարներ են քննարկվում:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Հովհաննիսյան Ա., Տարածաշրջանի ռազմականացումը և հայոց բանակը, Երևան, 2013, 268 էջ:
2. Հովհաննիսյան Ա., Արդյո՞ք պետք է միավորել ՌՕՈ-երն ու ՀՕՊ զորքերը, «21-րդ ԴԱՐ», 2010, № 2, էջ 88-101:
3. Հովհաննիսյան Ա., Արցախյան պատերազմում ադրբեջանական ավիացիայի գործողությունների և հայկական ՀՕՊ հակազդեցության վերլուծություն, «21-րդ ԴԱՐ», 2010, № 4, էջ 23-36:
4. Հովհաննիսյան Ա., Ադրբեջանի ռազմականացումը, «21-րդ ԴԱՐ», 2011, № 3, էջ 46-60:
5. Հովհաննիսյան Ա., ՀՀ, ԼՂՀ և ԱՀ որոշ ռազմական ցուցանիշների համեմատական վերլուծություն, «Աշխատանքային տետրեր», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հավելված, 2012, № 1-2 (21-22) (***գաղտնի***):
6. Оганесян А., Некоторые аспекты военного искусства в период Арцахской войны 1993-1994 гг., “21-й ВЕК”, 2014, № 1, стр. 33-59.

ОГАНЕСЯН АРЦРУН КАРАПЕТОВИЧ

СТРОИТЕЛЬСТВО АРМИИ В РА 1992-2010 ГГ.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 – История Армении
Защита состоится 24-ого июня 2014 г., в 14^{00} на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА
(0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Данное изучение представляет процесс формирования вооруженных сил, который шел параллельно с военными действиями, в безвыходных экономических условиях и в условиях оккупации, и в целом за время становления армянской государственности. Помимо всего представлены и военные действия. В отдельных главах научного труда подробно представлены также этапы развития армии, осуществленные основные процессы после заключения Соглашение о прекращении огня, то есть от чисто воюющей армии до организованной армии и этапы перехода к армии новой эпохи.

1. Процесс формировяания армянской армии

2. Подготовка командных кадров

3. Сотрудничество армии с международными организациями.

В главе “Процесс формирования армянской армии” обсуждаються необходимость создания регулярной армии после освободительного движения. Иследованы военные действия, которые так или иначе представляют боевой процесс формирования армии. Предъявлены основапологающие факты сформирования армии и некоторых милитаризованных струкруктур. Создание сил самообороны было естейственным процессом, который стал правовым продолжением процесса формирования армянской армии.

В главе “Подготовка командных кадров” представлены кадровые вопросы армии начиная с первых же дней, роль полевых командиров во время военных действий, а так же вопросы подготовки профессиональных кадров и задачи данного дела осуществляемого до сих пор. В 1992г., когда война усилилась, те же командиры уже давно стали профессионалами и отсутствие образования так же не особо остро ощущалось. Многие из них лица с высшим гражданским образованием и по сути в течение времени стали профессиональными военными. Конечно непоследное место занимает то обстоятельство, что армянский воин очень быстро становился профессионалом в боевых условиях, даже если он и не был тем специалистом.

В главе “Сотрудничество армии с международными организациями” исследованы пути сотрудничества и здесь также мы представили некоторые наблюдения и выдвинули предложения. В военной сфере новаторство, наука и техника

развиваються относительно небольшими государствами с которыми военное сотрудничество только укрепляает нашу оборонаспособность. Основные носители и развивающие последнего несколько силовые центры, сотрудничество с которыми выгодно и важно. Еще со времен войны руководство ВС РА сохраняло тесные отношения с госсударствами СНГ и в особенности РФ, а западные страны представляли интерес подобных отношений. В этом направлении особенно мы имеем место для развития.

В заключении даны пути развития армии и выдвинуты некоторые предложения. Армянская армия вступила в третий десяток лет со времен своего формировяания и имеет задачи а. обеспечение безопасности РА и НКР от внешней агрессии, б. сохранение состояния боевой подготовки войск и усовершенствование боевой смены, в. качественное и своевременное осуществление мероприятий предусмотренные по плану развития вооруженных сил РА, г. внедрение национальной критерий военного образования, д. осуществление госсударственной программы по развитию военно промышленного комплекса и укрепление военной дисцплины.

HOVHANNISYAN ARTSRUN KARAPET

FORMATION OF ARMED FORCES IN RA FROM 1992 TO 2010

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of
"History of Armenia" 07.00.01.
The defense of the dissertation will be held on June 24, 2014, 14^{00} at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA
(0019, Yerevan, Marshal Baghramyan Ave 24/4).

SUMMARY

This thesis presents the process of the armed forces formation among with the formation of Armenian State system, which was held in conditions of military operations, desperate economic blockade.

In the various chapters of this work the stages of the development of Army are presented, the main processes after the cease-fire, that is to say the stages from the army in the war to an organized army. The thesis is divided into three main chapters:

A. The formation process of the Armenian army

B. Command personnel training,

C. Army cooperation with international organizations

In chapter **THE FORMATION OF THE ARMENIAN ARMY** it is examined the need of a process of a regular army formation after the liberation movement.

The actions' details are extensively discussed as well as the combat operations which this or that way presented the conditions of formation of the army and those challenges that we faced.

Here are presented the bases of the creation of the army and some paramilitary structures as well.

The self-defense battalions' officer staff was formed and also a training of variety military specialists was organized. The formation of Nagorno- Karabakh self-defense power was a normal process, which was a legal continuation of the process of the Armenian army formation.

In chapter **COMMAND PERSONNEL TRAINING** are examined the issues of army cadres beginning from the first day, the role of field-commanders during combat operations, as well as professional training issues up to date. In 1992, when the war intensified, the same commanders have already turned into professionals and the lack of education was not felt sharply.

Many of them had higher civil education, even if they were not commanders, they were assistants and in the course of time actually they became military professionals. Even today many of them are brilliant commanders in the army. Of course, as a matter of fact the

Armenian warrior quickly became skillful in combat conditions, even if he was not a specialist.

In chapter **ARMY Co-operation With International Organizations** are discussed the ways of international cooperation.

All roads of solitary living had a lethal end, and this is more clearly manifested in the military field, as the military sector innovations, science and technology don't have large developement.

Their main carriers and developers are several power centers, with whom the collaboration is beneficial and important.

During the wartime the military commanders have maintained close ties with the CIS countries and especially with the RF. The western countries represented interests for such contacts.

Especially in this direction we have to advance.

In the conclusion the ways of the army development are presented and some suggestions are given. Nowadays the army entered the third decade of its formation and has a task:

A. The security of the Republic of Armenia and the Nagorno- Karabakh from an external aggression,

B. The maintenance of the conditions of troops alertness and improvement of combat duty,

C. Quilified and in time implementation of arrangements with Armed Forces Development Plan

D. Investment of military education

E. The implementation of the military-industrial complex development project and strengthening of military discipline.